ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. Դեկտեմբերի 2-ից 5-ը Ասիական Զարգացման Բանկի, Հարկային մարմինների համագործակցության, Խաղաղօվկիանոսյան կղզիների հարկային մարմինների ասոցիացիայի, Ասիա-Խաղաղօվկիանոսյան հարկային վարչարարության և հետազոտությունների ուսումնասիրության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից կազմակերպված «Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի միջազգային հարկային զարգացումների վերաբերյալ» թեմայով աշխատաժողովին մասնակցելու նպատակով Մանիլա (Ֆիլիպինների Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1" Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

1) Արմեն Գյուրջյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության տրանսֆերային գնագոյացման և հարկային համաձայնագրերի կիրառման բաժնի պետի տեղակալ:

2" Գործուղման վայրը և ժամկետները՝

Ֆիլիպինների Հանրապետություն, ք.Մանիլա 2024թ. դեկտեմբերի 2-ից 5-ը:

3" Հրավիրող կողմը՝

Ասիական Զարգացման Բանկ (ADB):

4" Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի միջազգային հարկային զարգացումների վերաբերյալ» թեմայով երկօրյա աշխատաժողովին: Աշխատաժողովը միտված էր ապահովելու, որ ՏՀԶԿ/G20-ի «Inclusive Framework on BEPS» անդամներն ու ոչ անդամները կարողանան տեղեկացված լինել միջազգային հարկային զարգացումների վերաբերյալ: Այն նաև նպատակ ուներ հավաքելու զարգացող տնտեսություններից իրենց առաջնահերթությունների և մտահոգությունների վերաբերյալ տեղեկատվություն և բացահայտել գործնականում հաճախ հանդիպող խնդիրները:

Աշխատաժողովին մասնակցել են տարածաշրջանային 32 երկրների ներկայացուցիչներ, որոնք ընդգծեցին համահունչ կարողությունների զարգացման անհրաժեշտությունը ողջ տարածաշրջանում:

Հանդիպման աշխատանքային լեզուն անգլերենն էր:

5" Քննարկված թեմաները՝

Աշխատաժողովի շրջանակներում մանրամասն քննարկվել են հետևյալ թեմաները՝

1) BEPS ծրագրի վերջին թքարմացումները և BEPS ծրագրի երկու հենասյուները, որի նպատակն է լուծել տնտեսության թվայնացումից բխող հարկային մարտահրավերները:

2) «Subject to Tax Rule»-ի իրականացումը և ներդրումը,

3) «Համաշխարհային հարկման բազայի քաքայման (Global Anti-Base Erosion Model Rules (GloBE))» մոդելային կանոնների կիրառման գործնական ասպեկտները,

4) BEPS ծրագրի նվազագույն չորս ստանդարտների ներդրման գործընթացները,

5) Երկրիների միջև փոխանակվող հաշվետվությունների արդյուքնում ստացվող տեղեկատվության արդյունավետ օգտագործման արդյունքում ստացված առավելությունները և հնարավոր դժվարությունները:

Մասնակցություն ենք ունեցել բոլոր քննարկումներին, որոնցից մի քանիսում ներկայացրել ենք մեր կողմից իրականացված աշխատանքները վերը նշված ուղություններով:

6"Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ելույթներ ունեցան ՏՀԶԿ ներկայացուցիչները, իսկ մասնակից երկրները ներկայացրեցին կատարված աշխատանքները և այն մարտահրավերները որոնց շրջանակում հայցում են աջակցություն կարողությունների զարգացման նպատակով:

Ելույթի խոսքով հանդես եկավ նաև Հայաստանը, կիսվեց BEPS նվազագույն ստանդարտների ներդրման ուղղությամբ կատարված աշատանքներով:

7" Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումը կրում էր խորհրդատվական նպատակ, ուստի որևէ փաստաթուղթի ստորագրում նախատեսված չէր: Արձանագրվեց, որ նմանատիպ նախաձեռնությունները կարևոր լրացուցիչ հնարավորություն են տալիս զարգացող երկրներին՝ ներդնելու

տարածաշրջանային երկրների ջանքերը միջազգային հարկմանը վերաբերվող լայն համագործակցության համար:

8" Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ՊԵԿ ներկայացուցիչներին տեղեկատվություն ստանալ տնտեսության թվայնացումից բխող հարկային մարտահրավերների և դրանց փոխազդելու նպատակով միջազգային կազմակերպությունների կողմից այդ հիմնահարցի մասով մշակված ուղեցույցների վերաբերյալ:

Առաջիկայում նախատեսվում են մի շարք դասընթացներ և աշխատաժողովներ: Վերոնշյալ դասընթացներին հնարավորություն կա մասնակցելու թե՛ առցանց ձևաչափով, թե՛ ֆիզիկական ներկայությամբ:

Այլ երկրների հետ փորձի փոխանակումը, ինչպես նաև առաջարկվող լուծումների ուսումնասիրությունը կնպաստի ՀՀ ՊԵԿ գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

9" Ստորագրությունը, ամսաթիվը

09.12.2024